Ազգ
Azg
18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 178(5261)
ISSN: 1829-1651

# Ժնեւյան բանակցությունների հաջորդ փուլը՝ նոյեմբերին

Ժնեւում ավարտվել է իրանական միջուկային ծրագրին նվիրված բանակցությունների հերթական փուլը, որի մասնակիցներն էին Իրանի եւ «Վեցյակի» երկրների (ԱՄՆ, ՌԴ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան եւ Գերմանիա) ներկայացուցիչները: Երկօրյա հանդիպման ընթացքում նախագահում էր Եվրոմիության դիվանագիտության պատասխանատու Քեթրին Էշթոնը:

Բանակցությունների ավարտից հետո ինչպես Էշթոնը, այնպես էլ Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը դրանք բնութագրել են որպես «բովանդակալից եւ ապագային միտված»: Սպիտակ տան մամլո քարտուղար Ջեյ Քարնին իր հերթին հայտարարել է, որ բանակցությունները ցուցադրեցին «մինչեւ օրս չտեսնված լրջություն եւ խորություն»:

«**Ազգը**» գրել է, որ իրանցիները Ժնեւ էին եկել միանգամայն նոր, առայժմ չհրապարակված առաջարկություններով, որոնք հետաքրքրել են Արեւմուտքին:

«Վեցյակի» ներկայացուցիչները Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել են, որ հանդիպման մասնակիցները պայմանավորվել են Ժնեւյան բանակցությունների հաջորդ փուլն անցկացնել նոյեմբերի 7-ին եւ 8-ին:

Իրանցիների միջուկային ծրագիրն առանձնակի խստությամբ դատապարտող Իսրայելի երկու լրատվամիջոցների՝ «Եդիոթ Ահրոնոթ» թերթի եւ «Քոլ Իսրայել» ռադիոկայանի թղթակիցներին հաջողվել է փոքրիկ հարցազրույց անցկացնել Իրանի փոխարտգործնախարար, Ժնեւում իրանական պատվիրակության ղեկավար Աբբաս Արաղչիի հետ: Վերջինս հույս է հայտնել, որ իր երկրի առաջարկությունների փաթեթը «կգոհացնի նաեւ Իսրայելին»:

# Ադրբեջանը խզո՞ւմ է ԱՄՆ-ի հետ հարաբերությունները

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության եւ տեղեկատվական ապահովման բաժնի վարիչ Էլնուր Ասլանովը բացառիկ հարցազրույց է տվել իշխանական 1news.az-ին: Առիթը Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի՝ ընդդիմության թեկնածու Ջամիլ Հասանլիին իբր թե «25 տոկոս գրելու մասին ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչների խնդրանքի» վերաբերյալ հայտարարությանը Միացյալ Նահանգների պետքարտուղարության արձագանքն է, որով Մեհթիեւի ասածները բնութագրվել են որպես «բացահայտ կեղծիք»:

Էլնուր Ասանովն ասել է, որ նախագահական «ընտրություններին» նախորդած ժամանակահատվածում Ադրբեջանի նախագահի աշխատակազմի եւ կառավարության ներկայացուցիչներն ամերիկյան կողմի հետ «մշտական շփումներում ընդգծել են նախագահ Ալիեւի բարձր վարկանիշը եւ անայլընտրանքայնությունը, ինչպես նաեւ պետության ղեկավարին բնակչության կողմից աջակցությունը՝ շնորհիվ իրականացված պահեստի սոցիալ-տնտեսական ծրագրերի»:

Այնուհետեւ իլհամալիեւյան վարչախմբի ներկայացուցիչը սենսացիոն հայտարարություն է արել, ըստ որի «նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի կողմից նշված թվերը (Իլհամ Ալիեւի եւ Ջամիլ Հասանլիի ձայների 75:25 տոկոսի հարաբերակցության մասին- Վ.Ա.) նախագահի աշխատակազմի եւ կառավարության ներկայացուցիչների հետ բազմաթիվ հանդիպումներում հնչեցվել են ամերիկյան, մասնավորապես՝ դեսպան Մորնինգստարի կողմից»:

Զարգացնելով միտքը, Ասլանովն այնուհետեւ «անթույլատրելի» է համարել, «երբ փակ հանդիպումներում ասվում է մի բան, իսկ մամուլի համար հայտարարություններում՝ բոլորովին այլ բան»: Իլհամ Ալիեւի աշխատակազմի պաշտոնյան չի զլացել տալու նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտի ընդհանրական բնութագիրը, ըստ որի՝ «թե ինչ արժեն նրանց (պետական դեպարտամենտի ներկայացուցիչների) իրական արարքներն ու հերքումները, ողջ աշխարհը գիտի Wikileaks-ի օրինակով»:

Տառացիորեն նախօրեին ադրբեջանական կայքերից մեկում վերլուծական էր հրապարակվել, որի հեղինակը տարակուսել էր, թե չի հասկանում՝ ինչո՞ւ են «իշխանությունները հետեւողականորեն փչացնում Վաշինգտոնի հետ առանց այդ էլ ոչ բարվոք վիճակի հարաբերությունները»:

Տես էջ 2

# Ազնավուրը հայ-ֆրանսիական համաժողովում



Վալանս քաղաքում մեկնարկած Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի մասնակիցներին իր ներկայությամբ պատվել է աշխարհահռչակ ֆրանսահայ շանսոնյե Շառլ Ազնավուրը:

Նա մասնակցել է Դրոմի դեպարտամենտի վարչական կենտրոնում կազմակերպված ընդունելությանը:

Համաժողովի բոլոր մասնակիցների անունից կազմակերպիչները շնորհակալություն են հայտնել անվանի ֆրանսահային՝ հրավերը չմերժելու եւ ընդունելությանը ներկա գտնվելու համար: Նրանք նաեւ վստահեցրել են, որ Շառլ Ազնավուրի նման վերաբերմունքը եւս մեկ խոսուն ապացույց է, որ հայ-ֆրանսիական բարեկամությունն իսկապես ամուր հիմքերի վրա է:

Ազնավուրը փոխադարձաբար շնորհակալություն է հայտնել հրավերի համար եւ հաջողություններ ու նոր ձեռքբերումներ է մաղթել համաժողովի մասնակիցներին ու կազմակերպիչներին:

# «Կան շենքեր, որոնք 10 տարուց ավելի անավարտ վիճակում են»

61 մլն դրամ է հատկացվել կառավարության կողմից պետական սեփականություն հանդիսացող անավարտ շինարարության օբյեկտներն ավարտին հասցնելու համար: Վարչապետ **Տիգրան Սարգսյանն**, անդրադառնալով այս հարցին, նշեց, որ պետությունը քաղաքացիների որոշ խմբերի սոցիալական բնակարանով ապահովելու պարտավորություն ունի եւ «շատ ավելի նպատակահարմար կլինի, եթե ավարտին հասցնենք անավարտ շինարարությունը, այլ ոչ թե զրոյից նոր շինարարություն սկսենք»: Ըստ վարչապետի՝ նույնը վերաբերում է նաեւ մասնավոր հատվածի անավարտ շինարարությանը: «Կան շենքեր, որոնք արդեն 10 տարուց ավելի անավարտ վիճակում են, եւ մենք չենք կարող անտարբեր նայել, թե այդ շենքերն ինչպես են քայքայվում: Արդեն պետք է որոշում կայացնենք, թե ինչ ենք անելու, եթե մասնավորը պարտավորություն է ստանձնել շենքը հասցնելու ավարտին ու ավարտին չի հասցնում, դրա հետեւանքով բազմաթիվ հանրային խնդիրներ են առաջանում: Այդ հարցերը պետք է քննարկել, լուծումներ առաջարկել, ինչ տույժ, տուգանք կարելի է կիրառել կամ դատական գործընթաց սկսել», ասաց Տիգրան Սարգսյանը:

Ա. Մ.

# Աշոտ Մելքոնյան. «Արցախյան խնդրի այս փակ փուլն ինձ համար անտանելի է դարձել»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանը** «**Ազգի**» եւ «Հայոց աշխարհի»՝ Զորի Բալայանի աղմկահարույց նամակի վերաբերյալ հարցերին



ի պատասխան երեկ նշեց, թե կարդալով զգացել է, որ հեղինակն ահազանգ է հնչեցրել. «Ըստ երեւույթին մի չարաբաստիկ փաստաթուղթ է պատրաստվում Արցախյան խնդրի լուծման ուղղությամբ: Եվ եթե իսկապես Մադրիդյան սկզբունքների հիման վրա պիտի մի նոր բանաձեւ մեզ պարտադրվի՝ վերադարձնելու համար այսպես կոչված «գրավյալ» տարածքները, եւ նույնիսկ միայն Լաչինի միջանցքն է մեզ թողնվելու՝ Քարվաճառն ու Լաչինի ամբողջ շրջանը այդ նախագծով պարտադրվելու է վերադարձնել ադրբեջանցիներին, այդ իմաստով, իհարկե, նամակն ահազանգ է»:

Աշոտ Մելքոնյանն ասում էր, թե երբ որպես մասնագետ հստակ տեղեկատվություն չունես եղածի մասին, եւ եթե կա նման նոր առաջարկ՝ մտահոգությունը լրիվ հասկանալի է. «Ես ենթադրում եմ, որ կա նման բան, Մադրիդյան սկզբունքներն օրակարգից չեն հանվել. եթե Ռուսաստանը տեղի տա Ֆրանսիային եւ Միացյալ Նահանգներին՝ մյուս եռանախագահներին, եւ այդ փաստաթուղթը մեջտեղ բերվի եւ մեզ պարտադրվի, իհարկե, դա մահաբեր փաստաթուղթ կլինի: Արցախի կորուստը նշանակում է հավասարապես Զանգեզուրի կորուստ, Զանգեզուրի կորուստ նշանակում է ՀՀ կորուստ: Այնպես որ՝ քննադատելուց առաջ, քննադատության այդ ալիքից առաջ պիտի հասկանալ, թե ի՞նչ է թաքնված այս ամենի հետեւում:

Ես կասկած չունեմ, որ Արցախի անկախությունը եւ ՀՀ անկախությունը բոլորիս համար վեր են ամեն ինչից, սակարկության առարկա չեն կարող լինել: Ուրեմն ենթատեքստ փնտրել, թե մենք 17-18-րդ դարի արցախյան մելիքների տարբերակով աղերսում ենք, որ Ռուսաստանը մեզ գա-փրկի՝ այդպես չէ:

Տես էջ 2

# Կվերականգնվի Մինաս Ավետիսյանի «Հայաստան» որմնանկարը

Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի մշակույթի տան նախասրահում գտնվող Մինաս Ավետիսյանի «Հայաստան» որմնանկարի ամրակայման եւ վերականգնման աշխատանքներն իրականացնելու նպատակով կառավարության երեկվա որոշմամբ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին կտրամադրվի 22,5 մլն դրամ:

# Տնտեսական մրցակցության պաշտպանության համար տուգանքները կփոխվեն

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում օրենսդրական մի շարք փոփոխություններ երեկ կառավարության նիստում ներկայացրեց տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը**: Նա մասնավորապես նշեց, որ սահմանվում է տուգանքների որոշման միասնական մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից, ինչպես նաեւ տուգանքի չափերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Այնուհետեւ, տուգանքի գանձման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով սահմանվում է մեխանիզմ, համաձայն որի՝ 10-օրյա ժամկետում տուգանքը վճարած տնտեսվարող սուբյեկտների համար նշանակված տուգանքի չափը կրճատվում է 20 տոկոսով:

Նաեւ կարգավորվում են անձանց խմբի, հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ բացառությունների, գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների, պատասխանատվությունից ազատման եւ տուգանքի չափի նվազեցման հետ կապված անհստակությունները:

Ա. Մ.

# Բաշկիրը գրել է հայոց պատմությունը՝ չափածո

ՌԴ դաշնային խորհրդի անդամ, Բաշկիրիայի Ազգային ժողովի նախկին փոխխոսնակ **Ռաֆայիլ Զինուրովը** չափածո գրել է հայոց պատմությունը՝ **«Հայաստան, հազարամյակների ուղի»** վերնագրով: Այն եռահատոր տոմ է, որտեղ ներառվել են Հայոց պատմության բոլոր արժանահիշատակ իրադարձությունները: Զինուրովը շքեղ ձեւավորված եռահատորին որպես հեղինակային անուն հայկական ազգանուն է ընտրել՝ Ուֆաեցի, այնքան որ իրեն նույնացած է զգացել այլ կրոնի ներկայացուցիչ, մասնագիտությամբ իրավաբան այս մարդը հայոց պատմության թվականներով չափածո դեգերելիս: Երեկ նրա եռահատորի (երրորդը դեռ նոր է լույս տեսնելու) շնորհանդեսն էր Ազգային ժողովում, նրան ու նրա գիրքը սիրով



ներկայացրին ԱԺ փոխխոսնակ **Էդուարդ Շարմազանովը**, պատգամավոր **Տաճատ Վարդապետյանը**, գրքի առաջաբանը գրող պատմաբան **Աշոտ Մելքոնյանը**: Պատմական արժեք ներկայացնող բացառիկ աշխատություն (չնայած հեղինակը պրոֆեսիոնալ պատմաբան չէ), պատմությունը ներկայացրել է՝ պահպանելով ժամանակագրությունը մինչեւ նորագույն պատմություն, օգտվել բազմաթիվ, այդ թվում հայկական սկզբնաղբյուրներից: Բաշկիր հեղինակի եռագրությունը ծնվել է հայերի հանդեպ մեծ սիրուց, այս էր Շարմազանովի ջերմ ելույթի մոտիվը: Հայ ժողովրդի լավագույն բարեկամ անվանեց Զինուրովին Ա. Մելքոնյանը, իսկ Տ. Վարդապետյանը նրան դրեց հայ ժողովրդի շատ հայտնի բարեկամների՝ Նանսենի, Վերֆելի, Սախարովի կողքին:

Ինքը, Զինուրովը նույնպես շատ ջերմ խոսեց՝ նախ հայերեն, «ախպերության» մասին, հետո անցավ ռուսերենի, ասելով, որ իր համար պատիվ է հայ ժողովրդի ու հայերի մասին գրելը:

Եռահատորը դեռ շնորհանդես է ունենալու Մոսկվայում, սակայն այդ աշխատանքի մասին արդեն Ռուսաստանում խոսում են:

**Մ. Խ.**

# Հայաստանի նոր այցեքարտը. ոչ մետաղական նյութերի վերամշակում

**Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի համալիր վերամշակման նոր արտադրատեսակները միջազգային ասպարեզում կարող են շատ մրցունակ լինել: Հայաստանն ունի պեռլիտի մեծ պաշարներ, իսկ հրաբխային ապարների պաշարներն ամենաշատն են Հայաստանում: Տեսակետը Քարակերտի քարաձուլման գործարանի ՓԲԸ տնօրեն, 1992-1995թթ «Հարարդշին» պետական ձեռնարկության փոխնախագահ Սուրեն Գեւորգյանինն է: Նա համոզված է, որ ոչ մետաղական նյութերի վերամշակմամբ Հայաստանը կարող է նորովի ներկայանալ աշխարհին եւ դա կդառնա Հայաստանի այցեքարտը:**

**«Սա է երկրի պոտենցիալը, նրա այցեքարտը: Պեռլիտից ստացվում են ջերմամեկուսիչ նյութեր, ինչն այսօր արտադրում են ԱՄՆ-ն եւ Գերմանիան ու հսկայական շահույթ ստանում, իսկ Հայաստանը, պաշարներ ունենալով հանդերձ, չի զբաղվում արտադրությամբ: Ամերիկյան մի ընկերություն աշխարհի 33 երկրների տարեկան 6 միլիարդ դոլարի այդ նյութերն է վաճառում: Պեռլիտից ստացվող նյութերն ավելի շահութաբեր են, քան մետաղականը», ասաց Գեւորգյանը՝ հավելելով, որ ջերմամեկուսիչ նյութերի կիրառմամբ Հայաստանը 2 ատոմակայանի էներգիա կարող է տնտեսել, կկարողանանք խնայել գազ եւ էլեկտրաէներգիա, իսկ ջեռուցման ծախսը 10 անգամ կկրճատվի:**

**Սուրեն Գեւորգյանը հավաստիացնում է, որ կան հստակորեն մշակված ծրագրեր: «Պետք է հասնել էներգախնայողության. Հայաստանն ունի այդ հնարավորությունը: Միայն Քարակերտի գործարանը կարող է 2000 աշխատատեղ բացել», ասաց Գեւորգյանը:**

**Հ. Հ.**

# Ադրբեջանը խզո՞ւմ է ԱՄՆ-ի հետ հարաբերությունները

*1-ին էջից*

**Իրոք, Իլհամ Ալիեւի հակամերիկյան հիստերիան, որն Էլնուր Ասլանովի կողմից դեսպան Մորնինգսթարին փաստացի «ընտրակեղծարարության» մեջ մեղադրանքով արդեն բոլոր սահմաններից դուրս է եկել, տրամաբանության մեջ, կարծես, չի տեղավորվում:**

**Մնում է մի ենթադրություն անել, նա մտադիր է դիվանագիտական սկանդալ սարքել Միացյալ Նահանգների հետ: Հաշվարկն, ըստ երեւույթին, կառուցված է այնպես, որ «ընտրակեղծարարության» մեջ մեղադրվող դեսպան Մորնինգսթարին Սպիտակ տունն ստիպված կլինի ետ կանչել: Եվ քանի որ ԱՄՆ-ում նոր դեսպանի նշանակումը կապված է Կոնգրեսում նրա թեկնածությանը հավանություն տալու-չտալու ընթացակարգի հետ, ապա հնարավոր է, որ ամիսներ շարունակ Ադրբեջանում Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցիչը մնա գործերի հավատարմատարի կարգավիճակով:**

**Իսկ դա իր հերթին ենթադրում է երկկողմ հարաբերությունների ոչ վստահելի եւ անհամեմատ ցածր մակարդակ: Ըստ երեւույթին, Իլհամ Ալիեւին խիստ անհրաժեշտ է մի որոշակի ժամանակահատվածով Սպիտակ տան համար «անհասանելի» դառնալ: Թե ինչո՞ւ՝ այլ խնդիր է: Ենթադրություններ կարելի է անվերջ անել:**

**Մինչդեռ ակնհայտ է, որ Իլհամ Ալիեւը Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները սրում է գիտակցաբար: Բացառված է, թե նա չի գիտակցում, որ Վաշինգտոնի պատասխանը կլինի «համարժեքորեն» ավելի խիստ: Մնում է մտածել, որ դա արվում է, որպեսզի արտաքին քաղաքական վերակողմնորոշման համար հող նախապատրաստվի:**

# Աշոտ Մելքոնյան. «Արցախյան խնդրի այս փակ փուլն ինձ համար անտանելի է դարձել»

*1-ին էջից*

**Մի նրբերանգ կա. Ռուսաստանը եթե իսկապես մեր ռազմավարական դաշնակիցն է, ինչպե՞ս է թույլ տալիս իրեն 4 միլիարդ դոլարի զենք վաճառել Ադրբեջանին: Եթե ռազմավարական դաշնակից է, եւ մենք ՀԱՊԿ անդամ երկիր ենք, Ադրբեջանը ՀԱՊԿ անդամ չէ, եւ սա ռուսները համարում են բիզնես, դա ուղղակի խայտառակություն է: Կուզեի Ռուսաստանի կողմից ռեակցիան հստակ հասկանալ՝ սա (նամակը-Մ.Խ.) հայերի կողմից հնչեցվող ահազա՞նգ է ընկալվում, թե հերթական մի աղերսագիր, որին հենց այնպես կարելի է քամահրանքով վերաբերվել», ասաց պատմաբանը:**

**Մյուս կողմից՝ մասնագետները, պատմաբանները, քաղաքագետներն այս խնդիրը պետք է միանգամայն այլ հարթության վրա դնեն, եւ այդ նույն ահազանգն իրենք էլ հնչեցնեն եւ ռազմավարական դաշնակցին հիշեցնեն, որ նախկինում ինչպես կայինք կրտսեր եղբոր կարգավիճակով՝ այսօր այդ կարգավիճակում չենք:**

**«Ազգը» հետաքրքրվեց՝ եթե անհանգստություններ կան Արցախի հարցի հետ կապված՝ պատմաբանները կամ այլ ձեւաչափերով ինչու այդ հարցը չեն բարձրացնում, որ անձի մակարդակով եւ նամակի տեսքով հարց բարձրացնելու խնդիր չծագի. «Արցախյան խնդրի այս փակ փուլը ինձ համար անտանելի է դարձել արդեն: Լրագրողներդ շատ տեղին հարցեր եք ուղղում մեզ, մենք չենք կարողանում դրանց պատասխանը տալ, քանի որ տեղեկատվություն չունենք:**

**Ասվում է, որ նախագահի, արտգործնախարարի եւ մի քանի մասնագետների մակարդակով է քննարկվում այդ հարցը: Ադրբեջանական կողմը ժամանակ առ ժամանակ բացում է փակագծերը, եւ պարզվում է, որ նա արդեն գրպանում ունի այսպես կոչված «գրավյալ տարածքների» վերադարձման հանգամանքը, արդեն Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի տարածքի հարց է սակարկել՝ 5 տարի հետո նրա կարգավիճակը որոշելու համար գաղթականների վերադարձից հետո: Հայաստանում այդ մասին լռություն է: Սա անթույլատրելի է: Պիտի բացել փակագծերը, հանրությունն իմանա, թե ի՞նչ է նախապատրաստվում, եւ ըստ այդմ էլ պետք է հասարակական կարծիք ձեւավորել այս կամ այն լուծման վերաբերյալ»:**

**Չնայած, ըստ Ա. Մելքոնյանի, Զորի Բալայանը միայն նեղ խնդիր չի դնում՝ Արցախի խնդիրը: Առհասարակ Ռուսաստանի քաղաքականության ոլորտում Հայաստանը, եւ ի մասնավորի Արցախը ի՞նչ տեղ ու դեր են ունեցել, արդյո՞ք մենք գործոն ենք ռուսական քաղաքականության մեջ: Համենայն դեպս՝ նամակում ցույց է տրվում, որ 1920-21 թվականներին մենք գործոն չէինք, եւ մեր ազգային պետության շահերն ուղղակի ոտնահարվեցին բոլշեւիկյան Ռուսաստանի կողմից. «Հիմա ահազանգը հնչեցվում է, որ նման բան չկրկնվի այս փուլում: Երբ մենք Արցախյան ճակատում հաղթանակ ենք տարել, մենք պիտի որ այդ հաղթանակի պտուղներից օգտվենք»:**

**Իսկ Գյուլիստանի պայմանագրի մասին հիշեցումն Ռուսաստանին, ըստ պատմաբանի, ուղղակի ճանաչողական նպատակ է հետապնդում. ապրիլի 24-ի նախօրյակին ամեն անգամ իրեն «Գոլոս Ռոսսիից» զանգահարում են, հարցնելով, թե ի՞նչ է տեղի ունեցել 1915 թվականին հայ ժողովրդի հետ: Սա Ա. Մելքոնյանը խայտառակություն է համարում, քանի որ ամերիկյան հասարակությունը խորհրդարանի մակարդակով եթե չի ճանաչում ցեղասպանությունը, գոնե քննարկման արդյունքում իմացվում է՝ կա այսպիսի խնդիր, ամերիկյան կոնգրեսը չի ընդունում այդ իրողությունը: Իսկ այն դեպքում, երբ Ռուսաստանը 1995 թվականի ապրիլի 17-ին ճանաչել է Հայոց ցեղասպանությունը միաձայն, ռուս հասարակությունն անտեղյակ է ցեղասպանության իրողությունից. «Պիտի իրազեկել մեր ռազմավարական դաշնակցին ու միաժամանակ հիշեցնել՝ եթե դու ռազմավարական դաշնակից ես, ունես պարտավորություններ Հայաստանի նկատմամբ», եզրափակեց պատմության ինստիտուտի տնօրենը:**

## ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

**Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջին փոխնախագահ Արամ Սարգսյանին**

Թանկագին Արամ Գասպարի,

Ցավով տեղեկացա Ձեր սիրելի եղբոր՝ Համլետի մահվան մասին:

Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության եւ անձամբ իմ անունից խորապես ցավակցում եմ անդառնալի կորստի կապակցությամբ, ցավում Ձեզ հետ միասին եւ կիսում Ձեր վիշտը:

**ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության նախագահ**

---

**Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջին փոխնախագահ Արամ Սարգսյանին**

Թանկագին Արամ Գասպարի,

Համաշխարհային Հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության ղեկավարության եւ կոլեկտիվի անունից ընդունեք մեր խորին ցավակցությունները Ձեր սիրելի եղբոր՝ Համլետի անժամանակ մահվան կապակցությամբ:

Մտերիմ մարդու, հարազատի կորուստը ծանր վիշտ է յուրաքանչյուրի համար: Վշտակցության եւ սփոփանքի մեր խոսքն ենք ուղղում Ձեզ՝ մեր հարգարժան գործընկերոջը, հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

**ՄՀԵՐ ՇԱՀԳԵԼԴՅԱՆ**
**ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՅԱՆ**

---

**Ռամկավար Ազատական կուսակցության** հանրապետական վարչությունը վշտակցում է Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Զավենի Սարգսյանին՝ իր սիրելի եղբոր մահվան կապակցությամբ:

«**Ազգ**»-ի խմբագրակազմը խորազգաց ցավակցություն է հայտնում պրն Արամ Սարգսյանին ծանր կորստի առթիվ:

---

**Հայաստանի Դեմոկրատական կուսակցության** Հանրապետական խորհուրդը, կուսակցության անդամները եւ համակիրները խորապես վշտակցում են Արամ Սարգսյանին՝ սիրելի եղբոր՝ Համլետ Հովհաննիսյանի վաղաժամ մահվան առիթով:

**Հայաստանի Դեմոկրատական կուսակցության Հանրապետական խորհուրդ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ուկրաինական խաղաքարտը՝ Մաքսային միության տիրույթում

## *Հիմա էլ սկսվում են գազային պատերազմը, Տիմոշենկոյի գործի վերհանումն ու ԵՄ-ի կողմից մաս թափ տալու դրսեւորումները*

Արեւելյան գործընկերության երկրների վրա ճնշումները Ռուսաստանի կողմից մի պահ ստեղծել էին այնպիսի իրավիճակ, երբ թվում էր՝ կարեւորը ռուսաստանյան ճնշումներից Արեւելյան գործընկերության երկրներին փրկելն է: Հայաստանի պարագայում սեպտեմբերերեքյան հայտարարությունը Մաքսային միությանը միանալու որոշման մասին թերեւս որոշակիացրեց Հայաստանի հետ հարաբերությունների հետագա ձեւաչափը՝ անորոշ թողնելով այդ հարաբերությունների փոփոխված ձեւաչափի որոշակիացումը: Ու որքան էլ Հայաստանի նախագահի նշված հայտարարությանը հետեւեցին տարատեսակ ու դատապարտող հայտարարություններ Ռուսաստանի հասցեին, ակնհայտ էր, որ Եվրոմիության համար ավելի կարեւոր էր, թե ինչ կանի Ուկրաինան:

Ինչպես ասում են՝ տվյալ դեպքում քանակը մոտեցման մեջ որակ դրսեւորեց, քանի որ Եվրոմիության համար Ուկրաինան շատ ավելի կարեւոր էր՝ Ռուսաստանից եկող ճնշումներից պաշտպանելու համատեքստում, քան Հայաստանը: Եվ ստեղծված իրավիճակում կարելի էր կարծել, թե ԵՄ-ն ամեն ինչ մոռացել ու միայն արտաքին ճնշումներ թույլ չտալու ուղղությամբ է մտածում: Սակայն մեծ կարեւորություն ձեռք բերած Ուկրաինայի պարագայում էլ այժմ հայտնի է, որ մինչեւ Ասոցիացման համաձայնագրի հարցը փակված համարելը ԵՄ-ի պահանջները մնացել են անփոփոխ:

Խոսքը Ասոցիացման համաձայնագրի ստորագրման համար ներկայացված պահանջներին է վերաբերում, որոնք Ուկրաինան դեռ չի կատարել: Ի մասնավորի, Ուկրաինայի նախկին վարչապետ Յուլյա Տիմոշենկոյի գործը դեռ ավարտված չէ, ընդ որում այնպես, որ բավարարի բոլոր կողմերին: Օրերս այս հարցի առնչությամբ կրկին դժգոհության իր բաժինն է արտահայտել Եվրոխորհրդարանը, որի դիտորդական պատվիրակությունն էլ հետեւում է Ուկրաինայի կողմից պարտավորությունների կատարմանը:

Դեռեւս 2012-ի գարնանը Ուկրաինայի հետ Ասոցիացման համաձայնագրի նախաստորագրմանը մինչեւ օրս չի հետեւում ստորագրումը, ըստ էության, միայն քաղաքական համատեքստ ունենալու որակում ստացած Տիմոշենկոյի հարցի պատճառով, որը լուծելու պատրաստակամություն թեեւ ուկրաինական իշխանությունները արտահայտել են, սակայն իրականում լուծում դեռ չի տրվել: Պահանջը արդար դատավարությունն է, ազատ՝ քաղաքական ենթատեքստից այն դեպքում, երբ 2011-ին դատապարտված նախկին վարչապետուհուն Ուկրաինայում համարում են իսկապես մեղավոր եւ ոչ թե քաղաքական հալածյալ:

Ամեն դեպքում, Ուկրաինային մեծ քննություն է սպասում հենց նոյեմբերի վերջին Վիլնյուսում կայանալիք Արեւելյան գործընկերությանն գագաթաժողովից մոտ 10 օր առաջ, երբ Եվրոմիության արտգործնախարարները կանդրադառնան Ուկրաինայի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման հարցին: Նոյեմբերի 18-ին ԵՄ դիվանագետները կրկին կդիտարկեն Տիմոշենկոյի հարցի առնչությամբ իրերի դրությունը, մինչ այդ հարցին անդրադառնալով նաեւ եկող երկուշաբթի: Եվ քանի որ արդեն իսկ դիտորդական պատվիրակությունը Բրյուսել է վերադարձել ոչ դրական գնահատականներով, ակնհայտ է, որ որոշակի չոր, գուցե խիստ հայտարարություն կարելի է արդեն սպասել ԵՄ արտգործնախարարների հոկտեմբերի 21-ի հանդիպումից:

Միեւնույն ժամանակ, ռուսական ճնշումներն ու սպառնալիքները եւս չեն դադարում Ուկրաինայի հասցեին, ինչը կարող է մեղմացուցիչ ազդեցություն ունենալ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման համար առաջ քաշված պահանջների կատարման հարցում: Այն նույն ժամանակ, երբ եվրոպացիները գնահատում են Տիմոշենկոյի գործով ակնկալվող առաջընթացը, Ռուսաստանը սպառնալիքների հերթական բաժինն է մատուցում: Ընդ որում, այս պարագայում քաղաքական առեւտրի առարկա է դարձվում արեւելյան գործընկերներից ոմանց համար այնքան ցավոտ էներգետիկ հարցը:

Ուկրաինայի համար ռուսական գազին այլընտրանք գտնելու եւ դրանից օգտվելու հեռանկարն անկախ կեցվածք բռնելու համար անհրաժեշտ պայման է, հատկապես որ Ռուսաստանը գազային գործոնը շատ հարցերում է շահարկում, եւ ոչ միայն Ուկրաինայի հետ: Գազային անհամաձայնությունների տեղիք է տվել այն, որ Ուկրաինան ցանկանում է փոխել Տիմոշենկոյի ժամանակ ստորագրված գազային պայմանագրերը, Ռուսաստանն էլ սպառնում է պատժամիջոցներ կիրառել՝ ռուսական գազից հրաժարվելու պարագայում: Այսինքն՝ Ուկրաինայի պատճառաբանությունը, թե պայմանագրերը լավը չեն, ընդունելի հիմնավորում չէ Ռուսաստանի համար: Ավելին, ռուսական կողմը գտնում է, որ Ուկրաինան ցանկանում է հրաժարվել ռուսական գազից, եւ այս ենթադրություն-մտայնությունը հիմքեր ունի:

Այս համատեքստում անգամ դատարան դիմելու պատրաստակամության մասին հայտարարող Ուկրաինան, ի դեմս ներկայիս վարչապետ Նիկոլայ Ազարովի, այդուհանդերձ, նաեւ խոսում է ինչպես ասոցիացման գնալու, այնպես էլ Մաքսային միության հետ աշխատելու հնարավոր հեռանկարների մասին, ընդ որում, Ազարովի հիմնավորումն այն է, թե Ուկրաինան աշխարհագրական դիրքով անգամ գտնվում է Եվրոմիության ու Մաքսային միության արանքում: Սակայն ի տարբերություն Հայաստանի՝ Ուկրաինան խոսում է նախ դիտորդի կարգավիճակով Մաքսային միությունում հնարավոր հայտնության մասին, ինչպես նաեւ այդ միության որոշ դրույթների շուրջը համագործակցության, այսինքն՝ ինքն իրեն մանեւրելու տեղ թողնում է:

Եվ, ըստ էության, ճիշտ է վարվում: Չնայած այստեղ են ասել՝ Ուկրաինային էլ նայեք, մեզ էլ:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ Սինոփսիս Արմենիան շարունակում են համագործակցել՝ Հայաստանի աշխատաշուկային արտադրությանը պատրաստ շրջանավարտներ տրամադրելու ուղղությամբ

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը շուրջ 31 մլն դրամ է հատկացրել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային (ԵԿՏԱ)՝ «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնում կրթական ժամանակակից երրորդ լաբորատորիան ստեղծելու համար:



Սինոփսիս Արմենիայի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ ԵԿՏԱ-ի համագործակցության շրջանակներում բացվել է կրթական նոր լաբորատորիա: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը շուրջ 31 մլն դրամ է հատկացրել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային (ԵԿՏԱ)՝ «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնում կրթական ժամանակակից երրորդ լաբորատորիան ստեղծելու համար: ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներդրած ֆինանսական աջակցության շնորհիվ, լսարանային տարածքը համապատասխանեցվել է արդի ուսումնական պահանջներին եւ չափանիշներին: Այն ապահովվել է համակարգչային տեխնիկայով: Կհատկացվեն նաեւ ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի աշխատավարձն ու հավասարեցված այլ վճարները:

2011թ.-ին կողմերը եռակողմ համաձայնագիր էին ստորագրել կրթական համատեղ ծրագրի ստեղծման մասին՝ ուղղված ՏՀՏ ոլորտի մասնագետներ պատրաստելուն: Երեք տարվա ընթացքում ստեղծվել է կրթական երեք լաբորատորիա, որի համար ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներդրել է շուրջ 74 մլն դրամ: Սինոփսիս Արմենիան Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային (ԵԿՏԱ) անվճար հիմունքներով տրամադրել է էլեկտրոնային ավտոմատ նախագծման ուսումնական փաթեթի հավաստագրեր, համապարփակ ուսումնական նյութեր, ինչպես նաեւ ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի վերապատրաստում:

«Կրթությունն այն ոլորտն է, որի զարգացման համար անհրաժեշտ են լավ հաշվարկված եւ նպատակաուղղված ծրագրեր: Այստեղ ներդրված միջոցները հիմնականում արդյունք են տալիս ոչ թե անմիջապես, այլ՝ տարիներ հետո: Դրանք, սակայն, անգնահատելի են ու չափազանց կարեւոր՝ երկրի ապագան կանխորոշելու հարցում: Մենք ձգտել ենք ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք մասնագիտացման ճանապարհին թույլ կտան ապահովել ուսանողի հաջողելու հավանականությունը եւ որպես մասնագետ՝ նրա լիարժեք կայացումը: Ժամանակակից լաբորատորիաները կարող են նորովի բացահայտել ուսանողի ձիրքերը՝ կրթությունը դարձնելով առավել գրավիչ եւ արդյունավետ»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Բուհ-արտադրություն համագործակցության կրթական այս մոդելի կիրառումն արդարացված է: Այն հնարավորություն է տալիս ունենալ արտադրությանը պատրաստ շրջանավարտներ, ովքեր համապատասխան գիտելիքներ եւ ունակություններ ունեն՝ արդյունավետ ցուցանիշ ապահովելու համար: Սինոփսիս Արմենիայի կողմից իրականացվող կրթական մոդելի համաձայն ՝ բակալավրական ծրագրի երկրորդ կուրսի ավարտին, բարձր առաջադիմությամբ ուսանողները մրցութային կարգով ընդգրկվում են ծրագրում: Ընտրությունը կատարվում է Սինոփսիսի եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի մասնագետների եւ ԵԿՏԱ դասախոսների կողմից: «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնի բակալավրական կրթական ծրագիրն այս տարի կտա իր առաջին շրջանավարտներին: Բակալավրական կրթական ծրագիրն ավարտած լավագույն ուսանողներն այժմ հնարավորություն ունեն ուսումնառությունը շարունակել ամբիոնի մագիստրատուրայում:

«Տեղեկատվական եւ հեռահաղորդակցության ոլորտի զարգացման գերկարեւոր նախապայման է բարձրորակ եւ ժամանակակից պահանջներին բավարարող մասնագետների առկայությունը»,- ասել է Սինոփսիս Արմենիայի տնօրեն Հովիկ Մուսայելյանը: «Այս ծրագիրը ոլորտում տեսական գերժամանակակից գիտելիքներով եւ գործնական հմտություններով զինված մասնագետների պատրաստման համար եռակողմ համագործակցության փայլուն օրինակ է»:

«Միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր ամբիոնը ավելի մեծ հնարավորություն ստացավ էլ ավելի բարելավելու «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» մասնագիտացմամբ ուսանողների մասնագիտական որակների բարձրացման համար»,- ասել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտի տնօրեն եւ ԵԿՏԱ-ի «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնի վարիչ Վազգեն Մելիքյանը: «Նոր լսարանի բացումը հնարավորություն կտա սկսել իրագործել մագիստրոսական ծրագիր նոր մասնագիտությամբ»:

«Այս համագործակցությունը Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի եւ Սինոփսիս Արմենիայի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ մեծապես նպաստում եւ աջակցում է Ակադեմիայի բակալավրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերի բարելավմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ուսանողներին առաջարկելով նոր մակարդակի մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ հատկապես միկրոէլեկտրոնիկայի մասնագիտացման շրջանակներում»,- ասում է ԵԿՏԱ ռեկտոր Անդրանիկ Ավետիսյանը: «Ուսումնառության ընթացքում եւ պրակտիկաների ժամանակ ուսանողներին հնարավորություն է ընձեռնվում կիրառելու գիտելիքները եւ հմտությունները իրական նախագծերի շրջանակներում, ինչը եւս նպաստում է անմիջապես ուսումնառության ավարտից հետո մասնագիտական աշխատանքը մեկնարկելուն»:

# Ե՞րբ կբացվեն տարածաշրջանային մեծ շուկաները մեզ համար

Մեկ ամսից մի փոքր ավելի է անցել սեպտեմբերի 3-ից, երբ Հայաստանի Հանրապետության նախագահը Մոսկվայում հայտարարեց, որ մեր երկիրը ցանկանում է անդամակցել Մաքսային միությանը: Անցան առաջին թեժ բանավեճերը եվրասիական ու եվրոպական ինտեգրացիաների կողմնակիցների միջեւ, թերթ կարդացող եւ հեռուստադիտող հանրությունը փորձեց խորանալ խնդրի մանրամասների մեջ:

Հրապարակվեցին տնտեսագիտական բավական խոր եւ հիմնավոր հաշվարկների վրա կատարված հետազոտություններ, որոնցից մեր տեղյակ հասարակությունը պետք է որ եզրակացություններ աներ Հայաստանի տնտեսության համար ավելի նպաստավոր հեռանկարների մասին: Այդ հեռանկարներն էլ գնահատվում են ընդհանուր առմամբ նպաստավոր եւ դրական, եթե դրանց ուղեկցող քաղաքական շատ կոնկրետ գործընթացները նույնքան դրական հունով զարգանան:

Իրականում այս մեկ ամսվա քննարկումներով մենք սկսել ենք հասկանալ, որ տնտեսական կյանքում այսքան սպասված դրական տեղաշարժերը որեւէ ինտեգրացիոն գործընթացի արդյունքում այդպես էլ չեն լինելու, եթե տարածաշրջանային քաղաքականության մեջ շոշափելի տեղաշարժեր չլինեն: Օրինակ՝ եվրոպական ինտեգրացիայի պարագայում 2,3 տոկոս լրացուցիչ ինտեգրացիոն էֆեկտ խոստացողները անհապաղ նշում էին ռիսկերի մասին, որոնցից ամենաէականը հայ-թուրքական սահմանի փակ լինելն էր եւ հարաբերությունների չկարգավորվածությունը:

Եվրասիական ինտեգրացիայի ասպարեզում միջին հաշվով 4 % լրացուցիչ տարեկան ինտեգրային էֆեկտը համարվում էր հնարավոր, եթե, օրինակ, վերագործարկվի աբխազական երկաթուղին եւ լիարժեքորեն գործի հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքը: Բոլորին հասկանալի է, որ այս քաղաքական խոչընդոտների վերացման համար քաղաքական կամք եւ լուրջ ջանքեր են պետք, այն էլ տարբեր կողմերից: Ի՞նչ տվեց մեզ մեկամսյա քննարկումների շարքը եւ ի՞նչ կտա մեր հասարակությանը ավելի շատ տեղեկատվությունը տարածաշրջանային մեծ շուկաներում ընդգրկվելու հեռանկարի վերաբերյալ:

## Հայաստանի ավանդական կողմնորոշումները չեն փոխվել

Վերջին մեկ ամսում հասարակական կարծիքի միանգամից մի քանի ուսումնասիրություններ են արվել, որոնց արդյունքները գալիս են հաստատելու, որ հայաստանյան հասարակության ավանդական կողմնորոշումները չեն փոխվել, եւ մենք շատ կայուն ու տարիների հետ չփոխվող ընկալումներ ունենք մեր բարեկամների ու թշնամիների, մեր քաղաքական առաջնահերթ խնդիրների եւ դրանց լուծման ճանապարհին համագործակցության եւ առճակատումների հնարավորությունների մասին: Վերջին տարիների ընթացքում արված հասարակական կարծիքի բոլոր ուսումնասիրությունները վկայում են, որ հայաստանցիներն իրենց ճնշող մեծամասնությամբ ռուսամետ են եւ հենց Ռուսաստանն են համարում իրենց գլխավոր դաշնակիցը: Այսօր հրապարակվելու են մի նոր հետազոտության արդյունքներ, որոնք մտորելու, մեր հանրային տրամադրությունները հասկանալու եւ քաղաքական մոտեցումները հղկելու հետաքրքրական հնարավորություն են տալու: Օրինակ՝ Ռուսաստանի նկատմամբ ավանդական դրական մոտեցման հետ մեկտեղ շատ հետաքրքրական է, որ Մաքսային միությանն անդամակցելու հեռանկարին դրական է վերաբերվում մեր հասարակության 86 %-ը: Ընդ որում, հարցվածների միայն 6 %-ը վճռականապես դեմ է այս ինտեգրացիոն գործընթացին: Հարցվածների ճնշող մեծամասնությունը Հայաստանում արդյունաբերության զարգացման իրական հեռանկարը կապում է գլխավորապես Ռուսաստանի հետ, իսկ, օրինակ, գիտության զարգացման հեռանկարը՝ Եվրոպական միության հետ: Հարցվածների ճնշող մեծամասնությունը մատակարարվող գազի գինը համարում է շատ կարեւոր գործոն եւ պաշտպանում է այդ գնի չբարձրանալուն ուղղված բանակցությունների գործընթացը: Եվս մեկ շատ հետաքրքրական մանրամասն: Մեր հասարակությունը պատրաստ է ինտեգրվելու Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի հետ մեկ միասնական տնտեսական տարածքում, սակայն շատ աղոտ է պատկերացնում, թե ինչպիսին է լինելու այդ տարածքը: Եվ սա այն դեպքում, երբ եվրասիական ինտեգրացիան տարբեր ուժգնությամբ ծավալվում է արդեն 6-7 տարի, իսկ քաղաքական քննարկումները հետխորհրդային պետությունների քաղաքական էլիտաների շրջանում ընթանում են արդեն երրորդ տարին: Հետաքրքրական է նաեւ, որ եվրոպական արժեքների Հայաստանում ներարկման կողմնակիցները որոշակի ոլորտներում շատ շոշափելի թիվ են կազմում, սակայն հայտնի աղմկահարույց խնդիրների նկատմամբ մեր հասարակության մոտեցումները շարունակում են մնալ առավելագույնս ավանդական եւ պահպանողական: Կրկնեմ նորից, որ այս սոցիոլոգիական հետազոտությունները արժանի են ոչ թե ճղճղան քարոզչության, այլ լուրջ ուսումնասիրության, որը կարող է փոխել հասարակական հոռետեսական տրամադրությունները եւ ավելի մեծ վստահություն ու լավատեսության հիմքեր ստեղծել: ԱՊՀ երկրների տարբեր քաղաքագետներ նշել են, որ եվրասիական ինտեգրացիայի կարեւոր ուղղություններից մեկը կարող է լինել միասնական արդյունաբերական քաղաքականության հիմունքների մշակումը: Սա ասում եմ, որովհետեւ Հայաստանում արդյունաբերության զարգացման հույսը վերջին քսան տարիների դեինդուստրիալիզացիայի համապատկերում շարունակում է գրավիչ մնալ:



Մեր հասարակական բանավեճերից մեկի ժամանակ իմ քաղաքագետ ընկերներից մեկը մի նուրբ, բայց անվիճելի նկատառում հայտնեց: Բարձր տեխնոլոգիաների ոլորտը նույնիսկ զարգացած երկրներում ապահովում է մասնագետների համեմատաբար ոչ մեծ խավի կենսամակարդակը, բայց սոցիալական ազդեցության առումով շատ սահմանափակ ներդրում ունի հասարակության կենսամակարդակի վրա:

Սոցիալական ազդեցության առումով հասարակության բարգավաճմանը տանող ոլորտներն են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը եւ սպասարկումները: Այս ոլորտներն են ամենաշատ ներդրումների կարոտ եւ այս ոլորտների ներդրումներն էլ ուշ փոխհատուցվող են, իսկ առաջին երկուսը՝ նաեւ ռիսկային:

Եվ այսուհանդերձ, խորհրդային տնտեսության փլուզման ժամանակներից սկսած միայն հետխորհրդային պետությունների մասնագիտական կենտրոններում են խոսում արդյունաբերական կոոպերացիայի վերականգնման, ագրոարդյունաբերության զարգացման, տրանսպորտային կոմունիկացիաների մոդեռնիզացման խնդիրների մասին: Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի վերոհիշյալ ոլորտները ցույց են տալիս ռեսուրսների համախմբման արդյունքում զարգացման ավելի մեծ տեմպերի հաջողված օրինակներ:

Զգո՞ւմ եք արդյոք, հարգելի ընթերցող, որ նման կատեգորիաներով դատողություններ մեր ԶԼՄ-ներից շատ ու շատ վաղուց չենք լսել: Մոտավորապես այն ժամանակներից, երբ ազգամիջյան մի քանի հակամարտությունների հետեւանքով մենք հայտնվեցինք մասնակի շրջափակման մեջ: Հիշո՞ւմ եք արդյոք մի դեպք, երբ ժամանակակից աշխարհի արդյունաբերության հսկաները հետաքրքրված լինեն Հայաստանում նոր ձեռնարկություններ ստեղծելու խնդիրներով: Բացառությամբ մեկ-երկու դեպքերի, որ եղել են միայն ռուսական բիզնեսի հսկաները: Սեփականաշնորհման, մեր տնտեսության վերակազմավորման, առանձին ձեռնարկություններ ամբողջական ավերումից փրկելու գործընթացներն ընթացել են մեր ժողովրդի աչքի առաջ եւ բոլորի հիշողության մեջ դեռ թարմ են: Ահա թե ինչու է բարեկեցության հույսը դեռ չկորցրած հայաստանյան հասարակությունը հայացքն ուղղում դեպի եվրասիական ինտեգրացիա:

## Օազիսներ, որոնք կփոխեն երկրի դիմագիծը

Իմ լրագրողական անցյալի ամենավառ հիշողություններից մեկը լուսահոգի նշանավոր պատմաբան, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանի երկու հեռուստատեսային հարցազրույցների շարքն էր, որտեղ նա ոգեւորված խոսում էր Հայաստանում նոր արագացուցիչ կառուցելու անհրաժեշտության մասին: Մոտ մեկ տարի առաջ ես հանդիպեցի գիտության պետական կոմիտեի ղեկավար, ճանաչված ֆիզիկոս, պրոֆեսոր Սամվել Հարությունյանին, որն անցած տարիների ընթացքում նախանձելի հետեւողականությամբ եւ համառությամբ մի խումբ գաղափարակիրների հետ առաջ է մղում հայկական նոր արագացուցիչի ստեղծման ծրագիրը: Մեր տաղանդավոր ֆիզիկոսներն ինձ ոգեւորված, մեծ հավատով պատմում էին այն հարգալից ու շահագրգիռ վերաբերմունքի մասին, որին հանդիպել էին թե՛ եվրոպացի (ֆրանսիացի ու շվեյցարացի), թե՛ ռուսաստանցի մասնագետների կողմից: Գործն անգամ հասել էր Աբովյանի մոտերքում հողահատկացմանը: Ինչպես ժամանակին ասում էր պատմաբան Բաբկեն Հարությունյանը, այսօր մենք շատ ավելի մոտ ենք այնպիսի արագացուցիչի կերտմանը, որի շնորհիվ 2000 ամենատարբեր ոլորտների գիտնականներ միջազգային եւ տեղական պատվերներով կզբաղվեն լուրջ գիտահետազոտական աշխատանքով: Առանց չափազանցելու, հատկապես մեր օրերի գիտական աշխարհի կրած դժվարությունների ֆոնին, այս ամենը աննախադեպ գիտական աշխուժության եւ մեծ թվով գիտնականների բարեկեցիկ կյանքի ու ստեղծագործ աշխատանքի հնարավորություններ է ուրվագծում: Եվս մի հանգամանք: Անցյալ տարի իմ այս թեմայով գրած հոդվածի նկատմամբ ռուսական ԶԼՄ-ներում առանձնապես հետաքրքրություն չառաջացավ: Հիմա, երբ մեկ միասնական տնտեսական տարածք ու ընդհանուր շուկա ենք փորձելու կառուցել եվրասիական տարածքում, այս եւ նման գիտական ծրագրերը կարող են վերականգնել ու էլ ավելի առաջ տանել ժամանակին արտակարգ արդյունավետ, իսկ վերջերս խաթարվել սկսող գիտական կապերն ու կոոպերացիան հետխորհրդային տարածքում:

Պատկերացնում եմ այս տողերը կարդացող իմ ընդդիմախոսների կեցվածքը: «Ի՞նչ կապ ունի այս ամենը մեր կողմնորոշումների հեռանկարի հետ», կասեն նրանք: Այն կապն ունի, որ իրարից անջատելու, ամեն գնով մեզ իրարից հեռու պահելու հետեւանքով մեր հասարակությունը քսան տարում բարդ աշխատանք կատարողից դարձել է պարզ աշխատանք կատարող: Ասել է թե՝ ավելի պրիմիտիվ: Մեր հասարակության ինտելեկտուալ մասը երբեք չի հաշտվելու այս վիճակի հետ, եւ անընդհատ մեջտեղ են գալու իրականանալի, դժվար իրականանալի եւ նույնիսկ անիրականանալի ծրագրեր: Խնդիրն այն է, որ դրանց նկատմամբ պետական ըմբռնում, աջակցություն եւ ֆինանսավորում գտնվի: Ահա թե ինչու մեր հասարակության մտածող մասը չի կորցնում հույսը, որ եվրասիական ինտեգրացիայի ծավալման դեպքում մենք կներգրավենք նաեւ ինտելեկտ պահանջող միջազգային ծրագրերում:

Հասարակական քննարկումները ինտեգրացիոն հեռանկարների վերաբերյալ իրականում նոր-նոր են սկսվում: Դրանք շատ հետաքրքրական եւ լավատեսություն ներշնչող են լինելու:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Օրհան Ջեյնալովի «հերոսացման» նախերգանքը հնչեց

Եղավ այն, ինչ սպասվում էր. Բաքվում տրվել է Մոսկվայում Եգոր Շչերբակովի սպանության կասկածանքով ձերբակալված Օրհան Ջեյնալովի «հերոսացման» մեկնարկը: Երեկ Ռուսաստանի իշխանությունների հասցեին չափազանց կոշտ, Ադրբեջանում ապրող էթնիկ ռուսներին «համարժեք պատասխան տալու» սպառնալիքով հայտարարություն է տարածել այսպես կոչված «Ղարաբաղի ազատագրության կոմիտեն»:

Այդ «կառույցը» գլխավորում է ծնունդով նախկին աղդամցի, պատմաբան Ակիֆ Նաղիեւը (Նաղի), որն ադրբեջանական իշխանությունների ձեռքում «պատժիչ մահակի» գործառույթ է կատարում: Նաղիեւը հայտնի է նրանով, որ մի քանի անգամ «ինքնաբուխ» հարձակումներ է կազմակերպել Բաքվում ընթացող միջազգային միջոցառումների դեմ՝ պատճառաբանությամբ, թե «դրանց մասնակցում են օկուպանտ Հայաստանի ներկայացուցիչներ»:

Մոսկվայում Օրհան Ջեյնալովի կողմից Եգոր Շչերբակովի սպանությունն, ըստ երեւույթին, արթնացրել է Ակիֆ Նաղիեւի «հայրենասիրական զգացմունքները», որ ժամանակավորապես բթացել էին, քանի որ վաղուց ազգությամբ հայի մուտքը Բաքու արգելված է «նորին գերազանցություն» բռնապետի հրամանով:

Նաղիեւի հայտարարության մեջ առանձնանում է երկու հանգամանք: Նա կարծում է, որ եթե «Ադրբեջանում ապրում է շուրջ 100 000 ռուս, ապա դա վկայում է, որ Ադրբեջանը հանդուրժողական է, եւ Ռուսաստանի իշխանությունները, եթե չեն ուզում, որ Ադրբեջանում ապրող ռուսներն արժանանան համարժեք պատասխանի, պետք է վերջ տան ադրբեջանցիների հանդեպ գործադրվող բռնություններին»:

Սա փաստորեն ակնարկ է, որ Ադրբեջանում ապրող ռուսները ոչ թե այդ երկրի լիարժեք քաղաքացիներ են, այլ պատանդ՝ ռուս-ադրբեջանական հարաբերություններում եւ ամեն պահի կարող են ենթարկվել բռնատեղահանության, ջարդերի եւ ունեզրկման, եթե Ռուսաստանի իշխանությունները «վերջ չտան ադրբեջանցիների դեմ գործադրվող բռնություններին», այսինքն՝ եթե շարունակեն հետապնդել ազգությամբ ադրբեջանցի հանցագործներին:

Երկրորդ կարեւոր ազդակը, որ հնչեցրել է Նաղիեւը, ձեւակերպմամբ եւ բովանդակությամբ լրացնում է առաջինին: Նա, հաշվի առնելով, որ «ռուս իրավապահները եւ անձամբ Ռուսաստանի ՆԳ նախարարը Օրհան Ջեյնալովի հանդեպ ունեն կանխակալ վերաբերմունք», բարձրացրել է հանցագործության մեջ կասկածվողին «էքստրադիցիայի ենթարկելու եւ Ադրբեջանում դատելու» հարցը:

Կրկնենք, Ակիֆ Նաղիեւը պատահական «շուն» չէ, նա մշտապես «հաչել է», երբ Ադրբեջանում իշխող վարչախումբն է այդպես ցանկացել: Օրհան Ջեյնալովին «էքստրադիցիայի ենթարկելու» պահանջն, ամենայն հավանականությամբ, Նաղիեւի հայտարարություն է մուծվել Իլհամ Ալիեւի աշխատակազմի գիտությամբ:

Ըստ երեւույթին, Ադրբեջանում ռուսների զանգվածային ջարդեր եւ բռնատեղահանություն չկազմակերպելու «երաշխիք» են դիտվում Օրհան Ջեյնալովի էքստրադիցիան եւ Ռուսաստանի կառավարության կողմից «Մոսկվայում ադրբեջանցիների կրած նյութական վնասի փոխհատուցումը»:

Սա արդեն ուղղակիորեն Ռուսաստանի հեղինակության նսեմացման փորձ է: Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանում որոշել են Ռամիլ Սաֆարովի «նախադեպը» տարածել նաեւ Օրհան Ջեյնալովի վրա: Կենթարկվի՞ Մոսկվան Ակիֆ Նաղիեւի անունից հնչեցված սպառնալիքին: Թե՞, ընդհակառակը, հանդես կգա Ադրբեջանում ապրող հայրենակիցների անվտանգությունը եւ ապահովությունը երաշխավորելու մասին հայտարարությամբ:

Ընտրության հնարավորությունը չափազանց սուղ է. կամ՝ կամ: Իհարկե, կա նաեւ երրորդ ճանապարհը՝ երկկողմ տեսք ընդունել, թե «նման խնդիր չկա», որ «իրավիճակը փորձում են ուրել առանձին անհատներ» եւ այլն: Բայց, ինչպես երեւում է, Եգոր Շչերբակովի սպանությամբ «հունցվող խմորը դեռ շատ ջուր է տանելու»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ՌԴ կազակների կուսակցությունը կմասնակցի 2014 թ. ընտրություններին



Ռուսաստանի քաղաքական նոր ուժերից մեկը՝ Կազակների կուսակցությունը, մտադիր է արդեն 2014 թ. մասնակցել տարածաշրջանային եւ տեղական ընտրություններին: Ինչպես հոկտեմբերի 17-ին հաղորդում է «Կոմերսանտ» թերթը, դա նախատեսված է Կազակների գործերի նախագահական խորհրդի հաստատած փաստաթղթով:

Հաղորդման մեջ նշվում է, որ խորհրդի հաստատած 2014-2015 թթ. ծրագիրը, ընտրություններին մասնակցելուց բացի, նախատեսում է կազակների առավել լայն ներգրավում իրավակարգի եւ պետական սահմանի պաշտպանության գործում: Այսպես, կազակները պայմանագրային հիմունքներով ոստիկանների հետ մեկտեղ պարեկություն կանեն քաղաքների փողոցներում:

Այդ ռազմավարական ծրագիրը նաեւ նախատեսում է կազակների մասնավոր պահնորդական ձեռնարկությունների ստեղծում եւ կազակների ներգրավում տարերային աղետների հետեւանքների վերացման գործում: Վերջին դեպքում նրանք պետք է օգնեն արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներին: Բացի դրանից, նախատեսվում է կազակներին հանձնարարել շրջակա միջավայրի պաշտպանությունը: Նրանք մասնավորապես կզբաղվեն անտառի պահպանությամբ, անտառային ֆոնդի վերականգնմամբ եւ հազվագյուտ կենդանիների պաշտպանությամբ:

Ծրագրում առանձնակի ուշադրություն է դարձվում երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանն ու կրթությանը: Այդ նպատակով կընդլայնվի կադետական կորպուսների ցանցը: Բացի դրանից, Մոսկվայի Ռազումովսկու անվան տեխնիկայի ու կառավարման պետական համալսարանի բազայի վրա կստեղծվի առաջին Կազակական համալսարանը:

Ներկայումս կազակներն արդեն պարեկություն են անում Ռուսաստանի որոշ տարածաշրջանների բնակավայրերի փողոցներում: Կազակների առաջին դրուժինաները կազմավորվեցին 2012-ին Կրասնոդարի երկրամասում, իսկ ավելի ուշ դրանք օգտագործելու ցանկություն հայտնեցին Մոսկվայի եւ մարզի իշխանությունները: Բացի դրանից, դեռ նախքան փաստաթղթի ընդունումը կազակները անօրինական ծառահատումների կանխման նպատակով անտառներում պարեկելու պատրաստակամություն էին հայտնել:

Խորհրդի ընդունած ծրագիրը 2012-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հաստատած կազակության զարգացման ռազմավարության մի մասն է: Ռազմավարության խնդիրն է մեծացնել կազակության դերը պետական եւ մունիցիպալ խնդիրների լուծման մեջ: Ընդ որում, խոսքը միայն գրանցված կազակների մասին է, որոնց թիվը ներկայիս Ռուսաստանում մոտ 750 հազար է:

Պ. Ք.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

# ԱՄՆ-ը հաղթահարեց բյուջետային ճգնաժամը

## *Երկրի տնտեսության կրած վնասը՝ 24 մլրդ դոլար*

**ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման երեկ ստորագրել է վերջապես Կոնգրեսի հավանությանն արժանացած օրինագիծը, որը նախատեսում է պետհիմնարկների ֆինանսավորման ժամանակավոր վերականգնում եւ պետական պարտքի վերին շեմի բարձրացում: Այդ մասին հաղորդում է ABC News հեռուստաալիքը:**

**Օրենքով նախատեսված են պետհիմնարկների ֆինանսավորում մինչեւ 2014 թ. հունվարի 15-ը եւ փոխառության վերջնաժամկետի երկարաձգում մինչեւ փետրվարի 7-ը: Նաեւ ենթադրվում է, որ Կոնգրեսի զույգ պալատների ներկայացուցիչները կբանակցեն ֆինանսավորման առնչությամբ եւ արդյունքները կհրապարակեն մինչեւ 2013 թ. դեկտեմբերի 13-ը:**

**Նախօրեին Սենատի նիստում օրինագծի ընդունման օգտին քվեարկել էին 81, դեմ՝ 18 սենատորներ: Ապա օրինագծին հավանություն էր տվել Ներկայացուցիչների պալատը: Այսպիսով, երկրի բյուջեի հետ կապված փոխզիջմանը հավանություն են տվել 285 կոնգրեսականներ (ներառյալ բոլոր 200 դեմոկրատները), դեմ են արտահայտվել 144 կոնգրեսականներ (մեծ մասամբ հանրապետականներ), նշում է RFI ռադիոկայանը:**

**Բյուջետային ճգնաժամին հանգեցրել էին հանրապետականների եւ դեմոկրատների երկարատեւ վեճերը բուժապահովագրության ընդլայնված պետական ծրագրի՝ Obamacare-ի առնչությամբ: Բյուջեն ժամանակին չէր ընդունվել, եւ հոկտեմբերի 1-ից մինչեւ 16-ը դադարեցվել էր երկրի պետհիմնարկների ֆինանսավորումը, Standard & Poor's վարկանիշային գործակալության գնահատման համաձայն, դա ԱՄՆ-ի տնտեսությանը 24 մլրդ դոլարի վնաս էր պատճառել:**

**Վերլուծաբանները նշում են, որ Սենատում ձեռքբերված համաձայնությունը չի նախատեսում դեմոկրատների եւ վարչակազմի լուրջ զիջումներ, այդ թվում՝ Obamacare առողջապահական ծրագրի հարցում: Հանրապետականներին հաջողվեց հասնել օրենքի դրույթներից միայն մեկի վերանայմանը: Նոր ձեւակերպման համաձայն, պահանջվում է խստացնել հսկողությունը Obamacare ծրագրից օգտվողների նկատմամբ, որպեսզի թույլ չտրվեն չարաշահումներ:**

**Ամերիկացի քաղաքական եւ տնտեսական մեկնաբանները նշում են, որ նախագահ Օբամային հաջողվեց հաղթել Ներկայացուցիչների պալատը վերահսկող հանրապետականների դեմ ծավալված ճակատամարտում, սակայն վերջնական հաղթանակը տակավին հեռու է, քանզի միջկուսակցական գլխավոր տարաձայնությունները դեռ հաղթահարված չեն:**

**ԱՄՆ-ի պետական պարտքի թույլատրելի վերին շեմը՝ 16,7 տրիլիոն դոլար, արձանագրվել էր արդեն 2013-ի մայիսին: Այդ պահից սկսած ֆինանսների նախարարությունը արտակարգ միջոցներ էր ձեռնարկում դեֆոլտից խուսափելու համար: Հոկտեմբերի 17-ից այդ միջոցներն այլեւս չեն գործում:**

# Իրաքի պատերազմի զոհերի հավանական թիվը մոտ կես միլիոն է



**Իրաքի պատերազմում զոհված իրաքցիների հավանական թիվը մոտավորապես կես միլիոն է: Այս հետեւությանն է արվում ամերիկացի, կանադացի եւ իրաքցի գիտնականների կատարած հետազոտության մեջ, որի արդյունքները հրապարակվել են PLOS Medicine հանդեսում:**

**Գիտնականները իրենց եզրակացություններին հանգել են 2011 թ. մայիս-հունիսին իրաքյան 2000 ընտանիքներում անցկացված բանավոր հարցումների հիման վրա: Հարցման մասնակիցներին ընտրել էին պատահական ընտրանքի միջոցով: Նրանք ներկայացնում են Իրաքի բոլոր շրջանները: Հարցերը վերաբերում էին 2001 թ. հունվարի 1-ից, այսինքն նախապատերազմյան շրջանից մինչեւ 2011 թ. հունիս ընկած ժամանակահատվածը:**

**Ստացված տվյալների համաձայն, պատերազմի զոհերի ընդհանուր թիվը երկրի տարածքում կազմել է մոտ 405 հազար, որին գումարվել են 55 հազար զոհված փախստականները: Պատերազմի ժամանակաշրջանում՝ 2003-ի մարտից մինչեւ 2011-ի հունիս, Իրաքում մահացությունների թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 4,5: Այդ ցուցանիշը գրեթե 50 տոկոսով բարձր է նախապատերազմյան մակարդակից:**

**Մահվան դեպքերի մոտ 60 տոկոսը բռնարարքների հետեւանք է: Մյուս մարդիկ մահացել են պատերազմին անուղղակիորեն առնչվող պատճառներից. ենթակառույցի ոչնչացում, հիվանդանոցներ հասնելու անհնարինությունը եւ բուժհիմնարկների գերբեռնվածություն: Գիտնականներն արձանագրել են երեխաների բարձր մահացություն եւ պատերազմի ժողովրդագրական այլ հետեւանքներ, նշում է BBC News հեռուստաալիքը:**

**Ավելի վաղ հրապարակվել էին Իրաքի պատերազմի զոհերի թվի վերաբերյալ ինչպես ավելի «համեստ», այնպես էլ կես միլիոնը գերազանցող տվյալներ:**

**ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների զինված ուժերը Իրաք ներխուժեցին 2003-ի մարտին: Նպատակը Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումն էր: Թեեւ նախագահ Հուսեյնը ձերբակալվեց նույն տարվա դեկտեմբերին, պատերազմը վերաճեց պարտիզանականի եւ տեւեց երկար տարիներ: ԱՄՆ-ի եւ դաշնակիցների զորքերը երկրից վերջնականապես դուրս բերվեցին միայն 2011-ի դեկտեմբերին:**

75-ԱՄՅԱԿ

# Հրաչյա Աշուղյան



Օրերս լրացավ վաստակաշատ, բազմաթիվ բեմադրությունների, հեռուստաներկայացումների, զանգվածային շոուների, մասսայական տեսարանների բեմադրության հրաշալի մասնագետ, բեմադրիչ Հրաչյա Աշուղյանի 75-ամյակը: Նա ծնունդով Թբիլիսիից է՝ դերասան Գեւորգ Աշուղյանի որդին:

Հրաչյա Աշուղյանը չի հաշտվում այն մտքի հետ, որ այժմ 75 տարեկան է. «Չեմ հաշտվում ու մտածում եմ, կարող է ծննդյանս տարեթիվը սխալ է գրված, հետո հակառակ կողմից եմ նայում՝ էլի շատ է: Շնորհակալ եմ Աստծուց, որ եղել եմ Վարդան Աճեմյանի արվեստանոցից, գոհ եմ, քանի որ աշխատել եմ հիանալի արվեստագետների հետ: Ցանկանում եմ նշել նաեւ, որ ինչ լավ բան ունեմ, ինձ փոխանցվել է հորիցս ու մորիցս»:

Օրերս Թատերական գործիչների միությունում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված Հրաչյա Աշուղյանին: Մեկ հարկի տակ հավաքվել էին ռեժիսորի ընկերներն ու հարազատները եւ երեկոն լի էր հետաքրքրական հուշերով ու վկայություններով՝ կապված Հ. Աշուղյանի կյանքին:

Երեկոյի ընթացքում Հրաչյա Աշուղյանի ընկերներից դերասան Վրեժ Հակոբյանն ուրախությամբ նշեց, որ հայտնի ռեժիսորն իրենց համար հպարտություն է եւ ավելացրեց, որ Հ. Աշուղյանի բոլոր ներկայացումներում եղել է նրա ասիստենտը ու շատ բան է սովորել նրանից: Իսկ Երեւանի Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Երվանդ Ղազանչյանն անդրադառնալով Աշուղյան մարդ տեսակին՝ ասաց. «Ինչպիսին մարդն է, այդպես էլ նրա արվեստը: Դեռ չեմ հանդիպել սրիկայի, որը լավ ֆիլմ նկարահանի, կամ լավ երգի: Հրաչյա Աշուղյանի մարդկային հիանալի տեսակը փոխանցվում է բոլորին իր ստեղծագործություններից: Պետք է լինես մարդ, բարոյական մարդ, ինչպիսին է Հրաչյա Աշուղյանը»: Բեմադրիչ Անտոն Աղայանցն իր հերթին վաղեմի ընկերոջ, կուրսեցու մասին կես-կատակ, կես-լուրջ ասաց. «Հրաչիկին գովում ենք, որպեսզի մենք էլ երեւանք նրա շողքի տակ»: Վերհիշելով երիտասարդական ուրախ օրերը, Աղայանցն ուրախությամբ ասաց, որ իրենց կուրսն իսկապես մի ընտանիք էր:

Հարկ է նշել, որ Հրաչյա Աշուղյանն ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Աշխատել է Երեւանի Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես ռեժիսոր: Ապա սկսել է դասավանդել Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում: 1975 թ.-ից հեռուստաթատրոնում բեմադրել է մի շարք ներկայացումներ՝ Ռիչարդսոնի «Մեծ անտառի զավակները», Շեյնինի «Ծանր մեղադրանք», Դելմարի «Հիշիր վաղվա օրդ», Երվանդ Օտյանի «Թաղականին կնիկը», Գաբրիել Սունդուկյանի 4 վոդեւիլի հեռուստաներկայացումները, զանգվածային թատերականացված հանդիսություններ («Էրեբունի-Երեւան», «Գլաձորի 1700-ամյակը», 1-ին-ից 3-րդ համահայկական խաղեր եւ այլն): Արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի, ինչպես նաեւ ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի, ՀԹԳՄ ոսկե մեդալի, ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչմանը, ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը:

Իսկ ահա երեկոյի ժամանակ Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը որոշեց բացառություն անել եւ կանխավ Հրաչյա Աշուղյանին պարգեւատրել «Արտավազ» մրցանակով՝ թատերական արվեստին անձնուրաց ծառայելու համար: Ինչպես գիտենք, «Արտավազդ» մրցանակները շնորհվում են ամեն տարվա մարտի 1-ին, սակայն այս անգամ բացառություն արվեց:

Հ. Ղազանչյանը երեկոյի ընթացքում հիշեց նաեւ իր մանկության տարիներից երջանիկ, հետաքրքրական ու զվարճալի պահեր՝ կապված Հրաչյա Աշուղյանի հետ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Լյուբա Ուսպենսկայան, Սոնան եւ ուրիշներ՝ աշխարհահռչակ հայ ջութակահար Էդգար Հակոբյանի մենահամերգին




Ճանաչված ջութակահար Էդգար Հակոբյանը Մոսկվայում «Мир» համերգասրահում մենահամերգի ժամանակ ջութակային «հեղափոխություն» է կատարել: Հետաքրքրական է, որ Էդգարը համերգը սկսել է իր հարազատ Երեւան քաղաքի ծնունդը շնորհավորելով: Նույնիսկ մեծ հեռավորության պայմաններում Հայաստանի մայրաքաղաքն ու նրա բնակիչները ջութակահարի սրտում են:

Էդգարի վարպետության շնորհիվ ջութակի՝ որպես բացառապես դասական երաժշտական գործիքի մասին պատկերացումը շատերի մոտ փոխվել է: Ներկաները հնարավորություն են ունեցել ունկնդրել երաժշտություն, որը ջութակահարը կոչում է «միավորող»: Աշնանային այդ գեղեցիկ երեկոյի ընթացքում այն իսկապես շատերին է միավորել: Հանդիսատեսը երկար կհիշի ջութակի միջոցով ստեղծված հրաշքը, Manuk Gazaryan Band-ի եւ Պրոկոֆեւի անվան ռուսական սիմֆոնիկ նվագախմբի փայլուն ելույթները: Էդգարին աջակցելու էին եկել նաեւ նրա ընկերները՝ Տիգրան Պետրոսյանը, Լյուբա Ուսպենսկայան եւ Sona-ն: Կադրից դուրս է մնացել միայն Ռոբերտ Բոյմը՝ տաղանդավոր հնչյունային ռեժիսոր, ով դահլիճում հրաշալի հնչողություն է ապահովել:

«Շնորհակալ եմ համերգի բոլոր մասնակիցներին, ամենից առաջ՝ ինձ հետ բեմում հանդես եկած երաժիշտներին: Նրանք պրոֆեսիոնալներ են եւ նրանց հետ հաճելի է ելույթ ունենալ»,- պատմել է Էդգար Հակոբյանը:

«Իմ բազմաթիվ ընկերները, ովքեր համերգի համար ժամանել էին արտերկրից, խոստովանեցին, որ միջոցառումն անցավ համաշխարհային մակարդակով: Ինձ շատ ուրախացրեց մեծ թվով հանդիսատեսի ներկայությունը: Դա խոսում է այն մասին, որ մեզ իսկապես հաջողվեց փոքրիկ երաժշտական հեղափոխություն կատարել: Դահլիճում հրաշալի մթնոլորտ էր: Հաճելիորեն զարմացրեց նաեւ այն, որ իմ Facebook-ի էջում, փաստորեն, իմ համերգի հանդիսասրահից առցանց-հեռարձակում սկսվեց: Ուրախ եմ, որ այդ հրաշալի օրը բեմում էի. իմ հարազատ Երեւան քաղաքի եւ եղբորս ծննդյան օրն էր»,- պատմել է երաժիշտը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Բացառիկ հրատարակություն

## Սայաթ-Նովայի «Հայերեն խաղերը»

«Հայագիտակ» հրատարակչությունը, որ գրքի միջազգային շուկայում հայտնի է քարեկազմ հուշանվերային հրատարակություններով, ինչպես նաեւ «Գիր». դասական ժառանգություն» մատենաշարով, օրերս հրապարակ հանեց մի բացառիկ ժողովածու՝ Սայաթ-Նովայի «Հայերեն խաղեր»-ը թեհրանաբնակ ճարտարագետ Վարդգես Զարգարյանի աշխատասիրությամբ: «Հայագիտակը» ընթերցողին քաջ հայտնի «Սեւ գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների եւ հայոց ցեղասպանության մասին» մեծարժեք գիրքը հայերեն, ռուսերեն, թուրքերեն հրատարակելուն զուգահեռ, լույս ընծայեց մեծ գուսանի 68 խաղերի ժողովածուն՝ պարսկերեն, ինչպես նաեւ թուրքերեն, վրացերեն, արաբերեն բառերի նոր, հիմնավոր մեկնաբանությամբ:

Գրքի շնորհանդեսը, որ տեղի ունեցավ ճարտարապետի տանը, բացեց «Հայագիտակ» հրատարակչության տնօրեն, գրքի պատասխանատու խմբագիր եւ հավելվածների կազմող Ալբերտ Իսոյանը: «Այսօր, ինչպես գիտեք,- ասաց նա,- Սայաթ-Նովայի ծննդյան օրն է. տարվա բոլոր օրերին մենք մտապես հիշում ենք նրան, հաղորդակցվում նրա բարձր արվեստին, ուստի յուրաքանչյուր օր ասես նորից է ծնվում, վերածնվում մեծ բանաստեղծն ու երգասացը. ասել է թե՝ նա չունի մահվան օր, Սայաթ-Նովան անմահ է»: Այնուհետեւ Ա. Իսոյանը անդրադարձավ Վարդգես Զարգարյանի կատարած բծախնդիր, բարեխիղճ, հսկայածավալ աշխատանքին, որի շնորհիվ հանրահայտ խաղերի մեջ տեղ գտած բազմաթիվ օտար բառեր եւ բառակապակցություններ ստուգաբանվում են նորովի եւ համոզիչ:

Գրքի շապիկը զարդարում է Երվանդ Քոչարի՝ ընթերցողին անծանոթ դիմանկարը, որը պահվում է մեծ արվեստագետի տուն-թանգարանում: Նշվեց, որ «Հայագիտակը» դիմելու է քաղաքապետարան այդ դիմանկարը Երեւանում տեղադրելու վերաբերյալ:

Աշխատասիրողի կատարած աշխատանքի, ինչպես նաեւ գրքի հրատարակչական, խմբագրական արժանիքների մասին խոսեցին բանասիրության դոկտոր, սայաթնովագետ Հենրիկ Բախչինյանը, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, գրքի առաջաբանի հեղինակ Սամվել Մուրադյանը, Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանը, մշակութաբան Ռոբերտ Միրզոյանը:

Աշխատասիրողը իր շնորհակալական խոսքում առանձնահատուկ նշեց գրքի խմբագիր Ալբերտ Իսոյանի, ինչպես նաեւ հրատարակչության աշխատակիցներ Վահագն Իսոյանի, Ալիսա Ալեքսանյանի եւ «Հայրապետ» տպարանի տնօրեն Սարգիս Թումանյանի կատարած ներդրումը գրքի հրատարակության գործում:

Շնորհանդեսը ուղեկցվում էր հայ երգիչներ եւ երաժիշտներ Գրիգոր Սաֆարյանի, Ռաֆայել Վարդանյանի, Արմեն Դանիելյանի, Ալեքսանդր Պողոսյանի կատարումներով:

Շնորհանդեսին մեծ շուք հաղորդեց հանրահայտ դաշնակահար, կոմպոզիտոր, հանրապետության վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանի եւ ռուս երգչուհի, միջազգային մրցույթների դափնեկիր, 2013 թվի Բեռլինի Կոմիտասի անվան երաժշտական մրցույթի առաջին մրցանակակիր Մարիա Կալեսիդիսի մասնակցությունը:

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին նվիրված համերգ Տոկիոյում

Հոկտեմբերի 15-ին Տոկիոյի Գինզա կենտրոնի Օջի համերգասրահում տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին նվիրված համերգ:

Միջոցառման մեկնարկին ներկաներին ողջունեց Ճապոնիայում Հայաստանի դեսպան Հրանտ Պողոսյանը խոսելով համաշխարհային արվեստում կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ավանդի եւ սերունդներին փոխանցած ժառանգության մասին:

Համերգի ընթացքում հնչեցին Արամ Խաչատրյանի եւ Կարեն Խաչատրյանի ստեղծագործությունները՝ անվանի երաժիշտներ դաշնակահար Արմեն Բաբախանյանի, թավջութակահար Արամ Թալալյանի եւ դաշնակահար Ջուլիետա Վարդանյանի կատարմամբ:

Համերգն ունկնդրելու էին եկել Ճապոնիայի պետական կառույցների պաշտոնյաներ, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, Ճապոնիա - Հայաստան ընկերակցության, ճապոնահայկական բարեկամության միության անդամներ, դասախոսներ, արվեստագետներ, լրագրողներ:

# Նոր գիրք՝ «Խաղաղություն»

(«Խաղաղություն», թուրքերենից թարգմանեց Արփի Աբաբեկյանը, «Անտարես» հրատարակչություն, Երեւան, 2013թ., 504 էջ, ISBN 978-9939-51-494-9):




Ահմեդ Համդի Տանփինարի «Խաղաղություն» վեպի իրադարձությունները ծավալվում են 1930-ական թվականների վերջին, երբ մոտալուտ համաշխարհային պատերազմի տագնապը մեծ ազդեցություն է թողնում մարդկանց կեցության եւ հոգեբանության վրա: Պատերազմի հավանականության ու խաղաղության փափագի հակադիր զգացողությունների մեջ սկիզբ է առնում սիրո մի հուզիչ պատմություն...

Վեպը «Անտարես» հրատարակչության նոր՝ «Օտարագիր» մատենաշարից է:

Գիրքը կարելի է ձեռք բերել «Հայ գիրք» գրախանութների ցանցից:

# Հայաստանի հավաքականն իր համար ռեկորդային՝ 38-րդ տեղում է



Բուլղարիայի եւ Իտալիայի հավաքականների հետ անցկացրած հաջող ելույթների շնորհիվ ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում հայտնվել է իր պատմության մեջ ամենաբարձր՝ 38-րդ հորիզոնականում: Նախորդ ամսվա համեմատ մեր հավաքականի վարկանիշը բարձրացել է 95-ով, իսկ Հայաստանի ընտրանին առաջադիմել է 17 տեղով:

ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում մինչ օրս Հայաստանի հավաքականի լավագույն արդյունքը 2012-ի փետրվարի ցանկում 41-րդ հորիզոնականն էր: Նշենք, որ ՖԻՖԱ-ի վարկանիշային աղյուսակը կազմելիս հաշվի են առնվում վերջին 4 տարիների արդյունքները: Հայաստանը ներկայումս 687 միավոր ունի, որից 446-ը վաստակել է այս տարի:

Հարկ է նշել, որ ՖԻՖԱ-ի դասակարգման հենց այս ցուցակում զբաղեցրած տեղերի հիման վրա էլ զամբյուղներում տեղաբաշխվելու են աշխարհի առաջնության մասնակիցները եզրափակիչ փուլի վիճակահանության ժամանակ: Ինչպես հայտնի է, մասնակից 32 երկրների հավաքականները նախնական փուլում բաժանվելու են 8 խմբի: Անկախ դասակարգման ցուցակում տեղ գրաված դիրքից, Բրազիլիայի հավաքականը, որպես առաջնության կազմակերպիչ երկիր, գլխավորելու է խմբերից մեկը, ուստի ընդգրկվելու է 1-ին զամբյուղում: Մնացած 7 խմբերը կգլխավորեն դասակարգման ցուցակում 1-7-րդ տեղերում գտնվող հավաքականները՝ Իսպանիան, Գերմանիան, Արգենտինան, Կոլումբիան, Բելգիան, Ուրուգվայը (եթե հաջողության հասնի անցումային խաղերում) եւ Շվեյցարիան:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից լավագույն արդյունքն ունի Ռուսաստանը, որը 19-րդ տեղում է: Ռուսները 4 հորիզոնականով նահանջել են: 20-րդ տեղում Ուկրաինան է, որը 6 տեղով առաջադիմել է: Հայաստանի հավաքականի արդյունքը 3-րդն է: Մյուս հանրապետությունների ցուցանիշներն այսպիսին են. 55. Ուզբեկստան, 83. Բելառուս, 88. Ադրբեջան, 96. Մոլդովա, 99. Էստոնիա, 100. Վրաստան, 103. Լիտվա, 116. Տաջիկստան, 117. Լատվիա. 125. Թուրքմենստան, 135. Ղազախստան, 150. Ղրղզստան:

Նախորդ ամսվա համեմատ ամենամեծ առաջընթացն ունեցել է Մոլդովայի հավաքականը, որը 33 տեղով բարձրացել է ու հանգրվանել է 96-րդ հորիզոնականում: Շոտլանդիայի ընտրանին 28 տեղով է առաջադիմել՝ զբաղեցնելով 35-րդ հորիզոնականը:

ՀՀ հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում գտնվում է Վենեսուելայի եւ Պերուի հավաքականների հարեւանությամբ: Մեր ընտրանին ամենավատ ցուցանիշն ունեցել է 1994-ի հուլիս-օգոստոսին՝ զբաղեցնելով 159-րդ հորիզոնականը: Այս տարվա հունվարին Հայաստանի հավաքականը 457 վարկանիշով 75-րդ տեղում էր: Այս տարվա ամենացածր ցուցանիշը գրանցվել է ապրիլ-մայիսին՝ 90-րդ տեղ:

# Ֆուտբոլիստները դեմ են Քաթարում աշխարհի առաջնությունն ամռանն անցկացնելուն

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ընկերակցության միջազգային ֆեդերացիան սպառնում է բոյկոտել 2022-ին Քաթարում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, եթե այն չանցկացվի ձմռանը:

«Մենք չենք պատրաստվում Քաթարում խաղալ ամռանը, որտեղ 45-50 աստիճան է: Անտանելի շոգը լուրջ խոչընդոտ ու վտանգ է ոչ միայն 22 ֆուտբոլիստների, այլեւ ֆուտբոլասերների ու զբոսաշրջիկների համար», նշվում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ընկերակցության հայտարարության մեջ:

Նույնիսկ ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերն է սխալ համարել աշխարհի առաջնության կազմակերպիչ երկրի ընտրությունը: Ճիշտ է, միեւնույն ժամանակ նա նշել է, որ դա արվել է հաշվի առնելով տարբեր մայրցամաքներում աշխարհի առաջնությունները կազմակերպելու անհրաժեշտությունը: Նա նաեւ նշել է, որ եվրոպական մի շարք երկրների ղեկավարներ խորհուրդ էին տալիս քվեարկել Քաթարի օգտին, քանի որ այդ պետությունում իրենք տնտեսական շահեր ունեն:

Աշխարհի առաջնության կազմկոմիտեն պատրաստ է նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ մարզադաշտերում ապահովել զովություն եւ նորմալ պայմաններ ամռանը հանդիպումներն անցկացնելու համար: Ի դեպ, նման սարքավորումներ Քաթարի մի շարք մարզադաշտերում արդեն տեղադրված են 2008-ից եւ հուսալիորեն աշխատում են: Չնայած այդ ամենին, կազմկոմիտեն պատրաստ է առաջնությունը տեղափոխել ձմռանը, եթե ՖԻՖԱ-ն մասնակիցների պահանջով որոշի փոփոխել ժամկետները: Ի դեպ, ՈւԵՖԱ-ն արդեն կողմ է արտահայտվել աշխարհի առաջնությունը Քաթարում ձմռանն անցկացնելու գաղափարին: Իսկ ՖԻՖԱ-ն պատրաստ է քննարկել այդ հարցը, եթե բժիշկներն ապացուցեն, որ շոգը կարող է վնասել ֆուտբոլիստների առողջությանը:

Սակայն առաջնությունը ձմռանն անցկացնելու դեպքում կոնֆլիկտ է առաջանալու ՄՕԿ-ի հետ: Չէ՞ որ 2022-ի ձմռանն անցկացվելու են ձմեռային օլիմպիական խաղերը: Իսկ դա հաշվի չառնել հնարավոր չէ: Ուստի ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին առաջարկել է աշխարհի առաջնությունը Քաթարում անցկացնել 2021-ի նոյեմբեր-դեկտեմբերին: Նա պատրաստ է եվրոպական առաջնություններում հարկադիր դադար տալ: Սակայն այդ դեպքում էլ հնարավոր է, որ խնդիրներ ծագեն հովանավորների հետ:

Քաթարում աշխարհի առաջնության անցկացման ժամկետները պետք է քննարկվեն ու հաստատվեն ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում:

# Ուիլսոնը 200 հազար դոլարի օգուտ տվեց պապին

**Ֆուտբոլի Ուելսի հավաքականի կիսապաշտպան Գարի Ուիլսոնի պապը՝ Փիթ Էդվարդսը 13 տարի առաջ 50 ֆունտ ստեռլինգ խաղադրույք էր կատարել, որ մի օր իր թոռը հանդես կգա երկրի ազգային հավաքականում: Այն ժամանակ Ուիլսոնը 2 տարեկան էր: Խաղադրույքի գործակիցը 2500 էր եւ ընդունվել էր William Hill բուքմեյքերական գրասենյակում:**

**Եվ ահա Բելգիայի հավաքականի հետ աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի վերջին խաղում Գարի Ուիլսոնը 87-րդ րոպեին փոխարինման մտավ՝ նշելով նորամուտն Ուելսի հավաքականի կազմում: Այսպիսով Գարիի պապը 200 հազար դոլար ստացավ: Իսկ Ուիլսոնը գերազանցեց Գարեթ Բեյլի ռեկորդը, որը Ուելսի հավաքականում հանդես եկած ամենաերիտասարդ ֆուտբոլիստն էր: Նա նորամուտը նշել էր 16 տարեկան 315 օրականում: Բելգիացիների հետ խաղի օրը՝ հոկտեմբերի 15-ին, Ուիլսոնը 16 տարեկան 207 օրական էր:**

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Ամիրխանյանն ու Ավագյանը մտան հաջորդ փուլ

**Ալմաթիում ընթացող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում հայ բռնցքամարտիկներն առաջին հաղթանակները տոնեցին: Մինչեւ 69 կգ քաշային կարգում Արամ Ամիրխանյանը 3-0 հաշվով հաղթեց Իսրայելը ներկայացնող Արտյոմ Մասինին եւ մտավ հաջորդ փուլ: Պայքարը կշարունակի նաեւ մինչեւ 56 կգ քաշային բռնցքամարտիկ Արամ Ավագյանը, որը պարտության մատնեց Անգլիայի ներկայացուցիչ Ջամալ Յաֆաիին: Իսկ ահա մինչեւ 75 կգ քաշայինների մրցավեճին մասնակցած Արման Հովնիկյանը չկարողացավ առավելության հասնել կորեացի Ժաեմին Ժոնգի նկատմամբ ու դուրս մնաց հետագա պայքարից:**

# Գրիգորյանը զբաղեցրեց 19-րդ տեղը

**Ինդոնեզիայի շախմատի բաց առաջնությունը հասեց վերջնագիծը: Ավետիք Գրիգորյանը 11 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 19-րդ տեղը: Վերջին 2 տուրերում հայ շախմատիստը ոչ-ոքի խաղաց Տրանգ Հոանգի հետ եւ հաղթեց Էրվան Մոհամադին:**

**Մրցաշարի հաղթող դարձավ ռուսաստանցի Ալեքսեյ Դրեեւը՝ 8,5 միավոր: 9 շախմատիստներ նրանից հետ մնացին մեկ միավորով:**

# «Միկան» կմասնակցի եվրոգավաթների մրցաշարին



**Շախմատի կանանց «Միկա» թիմը կմասնակցի հոկտեմբերի 20-26-ը Հունաստանի Ռոդոս քաղաքում կայանալիք եվրոպական գավաթների խաղարկությանը: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար կպայքարեն կանանց 11 թիմեր: Ի տարբերություն մյուս թիմերի, «Միկան» մրցավայր կմեկնի առանց պահեստային խաղացողի, իսկ դա նշանակում է, որ թիմի 4 անդամներն էլ ստիպված կլինեն մասնակցելու բոլոր մրցախաղերին:**

**«Միկայում» առաջին խաղատախտակը կներկայացնի Էլինա Դանիելյանը, 2-րդի վրա կխաղա հնդիկ Հարիկա Դրոնավալին: Մյուս խաղատախտակները կներկայացնեն Լիլիթ Մկրտչյանն ու վրացի Լելա Ջավախիշվիլին: «Միկան» նման մրցախաղերի մեծ փորձ ունի եւ բազմիցս մրցանակակիր է դարձել:**

**«Միկան» իր միջին վարկանիշով (2468) 11 թիմերի մեջ 2-րդն է: Ամենաբարձր վարկանիշն ունի Մոնտե Կառլոյի թիմը (2579), որի կազմում հայտավորված են աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը (2609), Համպի Կոներուն (2607), Աննա Մուզիչուկը (2585), Պիա Կրամլինգը (2515) եւ Էլմիրա Սկրիպչենկոն (2441):**

**«Միկայի» կազմում ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Հարիկա Դրոնավալին (2475), որի ցուցանիշը 11-րդն է մասնակիցների ցանկում:**

**Տղամարդկանց թիմային մրցումներին կմասնակցեն 52 ակումբներ: Սերգեյ Մովսիսյանը հանդես կգա Սանկտ Պետերբուրգի թիմի կազմում 4-րդ խաղատախտակի վրա:**

# Պելեն ինքնակենսագրական նոր գիրք է հրատարակել




**Ֆուտբոլի արքա Պելեն հերթական ինքնակենսագրական գիրքն է հրատարակել: Գրքի վերնագիրը «1283» է: Դա ֆուտբոլային կարիերայում Պելեի խփած գոլերի քանակն է: Գիրքն արժե 1225 եվրո եւ կշռում է 15 կգ: Գրքում ներառված են 500 լուսանկարներ եւ 1283 հոդվածներ, որոնք զետեղվել են ավելի քան 500 էջերում:**

**Պելեի յուրաքանչյուր ինքնակենսագրական գիրքը մակագրված է հեղինակի կողմից: Կոլեկցիոներների համար գրքերը հատուկ են հրատարակվել եւ արժեն 1875 եվրո: Բովանդակային առումով ոչ մի փոփոխություն չկա, պարզապես ավելացված են մի շարք լուսանկարներ:**

# Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

**Կայացել է ֆուտբոլի աշխարհի ակումբային առաջնության վիճակահանությունը: Մրցաշարը կանցկացվի դեկտեմբերի 11-22-ը Մարոկկոյում: Եվրոպայի չեմպիոնների լիգայի գավաթակիր Մյունխենի «Բավարիան» եւ Լիբերտադորեսի գավաթի դափնեկիր բրազիլական «Ատլետիկո Մինեյրոն» պայքարը կսկսեն կիսաեզրափակիչից:**

**Նախնական փուլում կմրցեն Մարոկկոյի «Ռաջա Կասաբլանկան» եւ Նոր Զելանդիայի «Օքլենդ Սիթին»: Այս զույգի հաղթողը կմրցի Մեքսիկայի «Մոնտերեյի» հետ: Այդ մրցավեճում հաջողության հասած թիմն էլ կիսաեզրափակիչում կլինի «Ատլետիկո Մինեյրոյի» մրցակիցը:**

**Իսկ «Բավարիան» կմրցի Ասիայի եւ Աֆրիկայի չեմպիոնների լիգայի գավաթակակիրների մրցավեճի հաղթողի հետ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

## 15 մլն եվրո բյուջետային երաշխիք՝ գյուղատնտեսության աջակցման համար

Գերմանական KfW բանկի եւ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջեւ կնքված «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի աջակցման» ծրագրի շրջանակներում 15 մլն եվրոյի համարժեք դրամի չափով վարկ տրամադրելու մասին պայմանագրով նախատեսված վարկային պարտավորությունների ապահովման նպատակով երեկ կառավարությունը որոշեց Կենտրոնական բանկին տրամադրել նույն չափով բյուջետային երաշխիք:

## 25 մլն եվրո՝ փոքր բիզնեսի վարկավորման համար

Ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը երեկ կառավարության նիստում տեղեկացրեց, որ եվրոբոնդերի վաճառքից ստացված գումարից «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին կհատկացվի մինչեւ 25 մլն դոլարին համարժեք դրամ բյուջետային վարկ, 6 տարի մարման ժամկետով, տարեկան 8 տոկոս տոկոսադրույքով, առանց պարտավորությունների կատարման ապահովման միջոցի: Վարչապետ Տիգրան Սարգսյանը ճշտեց, որ տոկոսադրույքը կլինի 7,5 տոկոս:

## Ճարտարապետության պետական կոմիտեն սկսեց գործել

Կառավարությանն առընթեր ճարտարապետության պետական կոմիտեի կանոնադրությունն ու կառուցվածքը կառավարության հաստատմանը ներկայացնելով՝ կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանն ասաց, որ կառույցի ստեղծման հիմնական նպատակն է ազգային ճարտարապետության պահպանումը եւ զարգացումը, կառուցապատման ծրագրերին մասնագիտական խորհրդատվության տրամադրումը, ճարտարապետության ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրության կատարելագործումը, տեղական ինքնակառավարման մարմիններին ճարտարապետության ոլորտի մասնագիտական խորհրդատվության տրամադրումը:

Հարցի առնչությամբ կարծիք հայտնելով՝ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանն ասաց, որ կոմիտեի լիազորությունները պետք է սահմանել օրենքով: Վարչապետ Տիգրան Սարգսյանի հարցին, թե կառավարությանն առընթեր այլ կոմիտեների լիազորությունները նո՞ւյնպես սահմանված են օրենքով, արդարադատության նախարարը պատասխանեց, որ ոչ բոլորինը, դա համարելով սխալ: Այդ առթիվ վարչապետը հանձնարարեց Հրայր Թովմասյանին՝ հանդես գալ պետական կոմիտեների գործունեությունը կարգավորող օրենսդրական նախաձեռնությամբ: Միաժամանակ, կառավարությունը հաստատեց նորաստեղծ կոմիտեի կառուցվածքն ու կանոնադրությունը: **Ա. Մ.**

# Ամենակարող «բժիշկը»



Բոլորին հայտնի է, որ մեղրը բնության «ամենակարող» բժիշկներից է. բուժում եւ կանխում է բազմաթիվ հիվանդություններ: Մեղրը կարգավորում է արյան ճնշումը, բուժում երիկամային եւ մաշկային որոշ հիվանդություններ, կանխում երեխաների գիշերամիզությունը: Բազմաթիվ օգտակար հատկություններ ունի նաեւ մեղրամոմը. հիանալի քսուք է վերքերի բուժման համար, վերացնում է կնճիռներն ու ճաքերը:

- Մեղրը ստեղծվում է մեղուների մարսողական գործողությունից: Ծաղկի նեկտարը ենթարկվում է ֆերմենտացիայի, իսկ ավելորդ հեղուկը գոլորշանում է,- բացատրում է կենսաբանական գիտությունների թեկնածու, մեղվաբույծ Կամո Պետրոսյանը:- Մեղրը հիմնականում պատրաստվում է տարբեր ծաղիկների նեկտարից, ուստի պարունակում է բազում օգտակար նյութեր մարդու առողջության համար:

Ինչպե՞ս տարբերել մեղվի եւ «մարդու» պատրաստած մեղրը: Մեղվաբույծ Կամո Պետրոսյանը բացում է մասնագիտական մի քանի գաղտնիք.

- Անարատ մեղրը մի ամանից մյուսը դատարկելու ընթացքում չպետք է կտրվի, այլ ծորալով դանդաղ իջնի ու ծալքերով կուտակվի: Եթե անարատ մեղրը թղթի վրա քսենք ու փորձենք այրել, չի այրվի, իսկ կեղծ մեղրն այրվում է:

Շաքարային դիաբետով տառապողներին եւս բժիշկները խորհուրդ են տալիս քաղցրի պահանջը բավարարել մեղրով: «Ամենակարող բժիշկն» այս դեպքում էլ է հասնում օգնության: Եթե մարդն ամեն օր մեղր օգտագործի, կարող է խուսափել բազում հիվանդություններից՝ ճնշման խանգարումներ, ստամոքսի խոց, մաշկային հիվանդություններ, տեսողական խնդիրներ:

Մեղրն իր օգտակար հատկություններով հայտնի է եղել դեռ մ.թ.ա: Հույն մաթեմատիկոս Պյութագորասն իր երկարակեցությունը եւ լավ հիշողությունը բացատրում էր, որ ինքը պարբերաբար օգտագործել է մեղր: Հին հույն բժիշկ Հիպոկրատն իր «Վերքերի մասին» աշխատության մեջ ներկայացրած շատ դեղատոմսերում ընդգրկել է նաեւ մեղրը: Դեռ մ.թ.ա. 3000 թ. Եգիպտոսում լավ զարգացած է եղել մեղվաբուծությունը: Եգիպտացիները բազմաթիվ հիվանդություններ բուժում էին մեղրով պատրաստուկներով: Եգիպտացիները պնդում էին, որ առողջ մնալու համար մարդն անպայման պետք է մեղր ուտի: Իսկ մեղրով ու կաթով լոգանքը համարվում էր ամենաբուժիչ ու հանգստացնող միջոցներից մեկը: Մեղրի ու կաթի պատրաստուկը այսօր էլ կիրառվում է մաշկը հարթ եւ առողջ պահելու համար:

Այնպես որ, կերե՛ք մեղր եւ եղեք առողջ ու գեղեցիկ: **ՀԱՍՄԻԿ ԲԱԼԵՅԱՆ**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** չեխական «Կարմա» գազի վառարան
Հեռ.՝ 094-48-68-03

**Վաճառվում է**

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 3700 $-ին համարժեք դրամ: Հեռ. (077) 700-710:

**«ԱՇՃՅԱՆ ՏՈՒՐ»**

**Երեւանում նորաբաց Աշճյան տուրն առաջարկում է 8-օրյա (28.12.2013-04.01.2014) անմոռանալի հանգիստ Լիբանանում: Անցկացրեք Ամանորը Բեյրութի առաջին կարգի հյուրանոցում՝ վճարելով ընդամենը 1050€: Գինը ներառում է ավիատոմս, վիզա, նախաճաշ, ընթրիք, ամենօրյա պտույտներ, բացառիկ ճաշկերույթ հայկական Այնճար ավանում:**

**Աշճյան տուրը կազմակերպում է ուղեւորություններ դեպի Կիպրոս, Քուրդիստանի Էրբիլ քաղաք, Ասորեստան, հայկական սրբատեղիներ եւ ցանկացած այլ ուղղությամբ:**

**Գրասենյակը զբաղվում է նաեւ հողերի առք ու վաճառքով:**

**Մանրամասների համար զանգահարեք մեզ հետեւյալ հեռախոսահամարներով՝**
**094-506-777, 055-048-126, 010-203-710**
**00961-1240-654, 0061-3233-978 (Բեյրութ)**
**կամ գրեք՝ ashjiantours@hotmail.com**

**ՇՏԱՊ վաճառվում կամ վարձով է տրվում**
ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.
055-06-28-48, 077-06-28-48




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 17.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: